…ւեց քաղաքի ս. Մարինէ մայր եկեղեցու մէջ հոկտ. 13-ին։ Հրաւիրուած և ներկայ էին հայ-կաթոլիկ, հայ-բողոքական վարչութիւնները, ուսուցիչներն ու աշակերտները, Միացեալ և Ազգանուէրի ուսուցչական կազմն ու աշակերտական խումբը, Սուրբ Կարապետի ուսուցիչները, քաղաքական կուսակցութիւնների ներկայացուցիչները, ժողովրդի ստուար թիւ ու քաղաքի ամբողջ հոգևորականութիւնը։

Ուրախալի էր գիտել, թէ ինչպէս ս. Սահակի և ս. Մեսրոպի անուններն ու ազգին թողած բարիքները բոլոր հայ անուն կրողներին՝ բողոքականներին, կաթոլիկներին, լուսաւորչականների հետ միասին բերեր միացրել էին մի եկեղեցու մէջ, և բոլորի սրտերը լեցուած էր երախտագիտութեամբ հայ գիրը ստեղծող այդ պաշտելի անունների հանդէպ։

Հանդէսը բացուեցաւ հոգևորականութեան կողմէ երգուած «Նմանեալ Մովսէսի» շարականով և ապա առաջնորդ Խարախանեան սրբազանի բանախօսութիւնով, որմէ յետոյ հերթով խօսեցին Միացեալ Ընկերութեան դըպրոցի տեսուչը, Մխիթարեան վարժարանի աշակերտներ, Հայուհեաց դըպրոցի ուսուցիչը, ս. Կարապետի ուսուցիչներ, Դաշնակցութեան ներկայացուցիչը, բողոքականների պատուելի պ. Գ. Ստեփան, և Վանէն հիւր եկած գերմանացի միսիոնար մը, որը դըրուատելով հայ ժողովրդի ժրաջանութիւնն ու չարքաշութիւնը, ուրախութիւն յայտնեց, որ Տարօնի հայերը կը պահեն իրենց լեզուն ու գրականութիւնը և կուլտուրին յառաջ դիմել։ «Ես ալ,— ասաց նա,— շատ կը սիրեմ իմ ազգն ու լեզուն և ուրախ եմ, որ դուք ալ ձեր լեզուն կը սիրէք։ Ահա իմ աղջիկս, որ մեծացեր է Վանի մէջ, գիտէ հայերէն, բարձրագոյն կրթութիւնը ստացեր է Գերմանիայի մէջ. բերեր եմ հոս հայր «Աբրահամի նման զոհ ընելու այս ժողովրդին»։ Այս խօսքերը արժանացան բուռն ծափահարութիւններին։

Բոլոր դպրոցական հաստատութիւնների կողմից լսեցին աշակերտական արտասանութիւններ, ս. Կարապետի ուսուցիչներից մէկը անգիր արտասանեց Ա. Ահարոնեանի «Յարգանք քեզ» գրուածքը։ Մէջ ընդ մէջ կերգէին ազգային և ժողովրդական երգեր. գեղեցիկ էին նաև մանաւանդ բողոքական դպրոցի ուսուցիչ-ուսուցչուհիների երգած քառաձայն մի քանի ազգային երգեր. կը մասնակցէր միսիոնարուհի Շւեստր Պոտէլ երգեհոնի նուագածութեամբ։ Գեղեցիկ և յուզիչ էր տեսարանը, սակայն տխուր և ցաւալի էր, որ ժողովրդի մէջ իրենց բացակայութեամբ կը փայլէին Մշոյ ունևոր աղա-էֆէնտիները, որոնք մի անգամ ևս հաստատեցին այն կարծիքը, թէ «հարուստը հայրենիք չունի»։

Համազգային այդ մեծ տօները յաւերժացնելու համար արդէն կազմուած է ֆոնտ մը և որոշուած է Տարօնը օժտել մամուլով մը, որի համար ս. Սահակի և ս. Մեսրոպի նկարներով զարդարուած նուիրատոմսերի վաճառումը կը շարունակւի։ Յոբելեանական յանձնախումբը շնորհակալութեամբ ստացած է Թիֆլիսի գրավաճառ տարօնցի պ. Կիւրեղ Բրինձեանէն 20 օրինակ «Տատրակ Տարօնոյ» երգարանը, որոնք պիտի վաճառուին ի նպաստ Տարօնի մամուլի ֆոնտին և շնորհակալութեամբ կընդունուին նուէրներ, որոնց ցանկը պիտի հրատարակուի թերթերի մէջ։

Աքէլ

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

## ՄԵԾ ՏՕՆԸ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

### Հ Ն Ձ Ե Շ Տ

(Բեսարաբիայի նահանգ)

Կիրակի, ամսոյս 13-ին, տեղիս եկեղեցում, կատարուեց հայրապետական մաղթանք։ Պատարագին երգում էր քառաձայն խումբը պ. Հ. Մինասեանի ղեկավարութեամբ։ Ծխատէր Աբրամեան քահանան ռուսերէն լեզուով բանախօսեց հայ գրի և տպագրութեան մասին։ Յետոյ հանգանակութիւն եղաւ դպրոցական ֆոնդի օգտին։ Մանուկբէյ իշխանուհիները նուիրեցին 1200 ր. իսկ ժողովրդից հաւաքուեց 55 ր. 30 կ.։ Գումարը իսկոյն հեռագրով փոխադրուեց Էջմիածին։ Երէցփոխ Յ. Գրիգորեանի և քահանայի միջոցով ժողովրդի կողմից շնորհաւորական հեռագիր ուղարկուեց Վեհափառ Հայրապետի անուն։

Այստեղ մօտերս սպասւում է վիճակաւոր առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսը, որ գալիս է այցելութիւն տալու իր հօտին և ի միջի այլոց, եթէ չենք սխալւում, շնորհակալութիւն յայտնելու Մանուկ-բէյ քոյրերին, որոնք անցեալ տարի 10,000 ր. են նուիրել Քիշնևում նոր կառուցուելիք հայոց եկեղեցու օգտին։

Հայկազ

### Ղ Ա Թ Ա Ր

Ամսոյս 13-ին Ղաթարի Պղնձահանքերում, «Բաղար» կոչուած վայրում Կ. Հ. Բ. Ընկ. գրադարանի ընդարձակ բակում հաւաքուել էին Վաչագան, Պաղպուրջ, Պառապատում, Կաւարտ, Շրւենոց և այլ հայ գիւղերի ուսուցիչներն իրենց աշակերտ-աշակերտուհիներով, Վահան վարդապետ Տէր-Գրիգորեանը մի շարք քահանաներով, Կ. Հ. Բ. Ընկ. «Ղափան» գրադարանի հիմնադիրներից Սմբատ բէկ Մելիք-Ստեփանեանը, բժիշկ Արսէն Խաչատրեանը և Իւանբէկ Մելիք-Բարամեանը, Բաղարի հասարակութիւնը և շրջակայ հայ գիւղերի ժողովուրդը։

Սովորական մաղթանքից յետոյ, աշակերտ-աշակերտուհիները արտասանեցին ոտանաւորներ և երգեցին մի շարք երգեր խմբական և սոլօ։

Թէ երգեցողութիւնը և թէ ոտանաւորները շատ լաւ տպաւորութիւն թողին հանդիսականների վրայ, ինչպէս և ուսուցիչների և ուրիշ մարդկանց ճառախօսութիւնները։

Շատ ուժեղ կերպով արտայայտուեց, որ այս տօնը ոչ վաճառականի տօն է, ոչ գիւղացու, ոչ հոգևորականի և ոչ մէկի, այլ ամբողջ հայ ժողովրդի տօնն է։

Դպրոցական ֆոնդի օգտին հաւաքուեց մօտաւորապէս 100 րուբլի։

Ա. Մելիք-Փարսադանեան

### Մ Ե Ղ Ր Ի

(Զանգեզուրի գաւառ)

Ամսիս 12-ին դպրոցի դահլիճում ուսուցչական կազմը աշակերտ-աշակերտուհիներով սակաւաթիւ ծնողների հետ տօնեց հայ գրերի գիւտի 1500 և տպագրութեան 400 ամեակը։ Գրերի գիւտի և տպագրութեան մասին բանախօսեց ուսուցիչ պ. Յովհաննէս Աւետիսեան։

Աշակերտական երգեցիկ խումբը երգում էր երկձայն երգեր։

Մէջ ընդ մէջ աշակերտները օրւայ հանդէսին պատշաճ ոտանաւորներ էին արտասանում։ Ներկայ էր թեմական տեսուչը, որը իր հերթին բանախօսեց։

Գիւղի հասարակութիւնը համարեա թէ բացակայ էր և շատ դժգոհ է, որ համազգային այդ մեծ տօնի հանդէսին չմասնակցեց, այդ էլ շնորհիւ այն բանի, որ միայն աշակերտների ծնողներին էին հրաւիրած։

Մ. Մամիջանեան

## ՄԵԾ ՏՕՆԸ ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻ ՄԷՋ

### Մ Ո Ւ Շ

Հայ տառերի գիւտի 1500 և տպագրութեան 400-ամեայ համազգային յոբելեանական Մեծ տօնը Տարօնի մէջ կատարուեցաւ այս տարի չորս անգամ հնարաւոր հանդիսաւորութիւնով։ Առաջինը Ս. Թարգմանչաց վանքի մէջ, ս. Թարգմանիչներ՝ Խորենացիի, Դաւիթ Անյաղթի, Առողիկի և այլ գերեզմանների վրայ, ներկայութեամբ խուռն բազմութեան և մասնակցութեամբ զինուորական երաժշտախմբի։

Երկրորդը՝ Ս. Կարապետի վանքի մէջ Վարդավառին, ուր ներկայ էին հայկական հինգ վիլայէթներէն ներկայացուցիչներ և այլ յարգելի անձնաւորութիւններ։

Երրորդը՝ Աշտիշատ Ս. Սահակի գերեզմանի վրայ, Կարնոյ Երիտասարդական Միութեան նախաձեռնութեամբ և շրջակայ գիւղացիների ներկայութեամբ, որի ժամանակ մեր իմաստուն կառավարութիւնը «թիւրիմացութիւնների» մէջ ընկաւ։ Ծրագրուած էր մի հանդէս ալ կատարել Ս. Մեսրոպի ծննդավայր Հացիկ գիւղի մէջ, սակայն զանազան նկատումներով, մանաւանդ կառավարութիւնը թիւրիմացութիւնների մէջ չձգելու պատճառով՝ չաջողուեց։

Չորրորդ և վերջին հանդէսը կատար-